

Յատկանշական զուգադիպութեամբ մը այսօր Տնտեսին Կիրակին է եւ մենք բոլորս իբրեւ տնտեսները Աստուծոյ Գործին եկած ենք մեր տարեկան համարը ներկայացնելու: Ուրախ եմ յայտարարելու որ ունեցանք եկեղեցական ու ազգային բարուք գործունէութեամբ բեղուն տարի մը: Տիթրոյթի մեր հայ համայնքը պատուաբեր դիրք մը կը գրաւէ Արեւմտեան կիսագունդի գաղթաշխարհին մէջ ոչ միայն իր թիւին պատճառաւ, այլ մանաւանդ իր երեւան բերած տեսիլքի տէր եւ զոհաբերող առաջնորդներով, որոնց իմաստութեան շնորհիւ ունինք համայնք մը որ ամէնէն աւելի կը տիրէ յարգանքն ու իրերահասկացողութիւնը ներկայ դժբախտ պայմաններուն ներած չափովը: Մեծագոյն Տիթրոյթի հայութեան թիւը կարելի է եղած ստուգել, ընդհանուր կարծիքը այն է թէ մեր թիւը կը հասնի 15,000-ի եւ թէ մեր Ծուկի շրջանակին մէջ գտնուող հայերու թիւն է մօտաւորապէս 48,000: Ունինք 1240 հասցէ, որոնց կը ղրկուին մեր ծանուցումներն ու թերթիկը, անցեալ տարուան վրայ աւելցուցած ըլլալով 78 նոր հասցէներ: Այս անցնող տարուան ընթացքին մեր տրատու անդամներուն թիւն է 1045, մեր տոմարները կը ցուցնեն թէ անցեալ տարի ունէինք միայն 780 անդամ: Եթէ այս թիւերը կը խօսին, անոնք մէկ բան կըսեն. Մեր ժողովուրդը, եւ մասնաւորաբար մեր երիտասարդութիւնը կը դիմեն Հայց. Եկեղեցի ու անկէ կը սպասեն իրենց ազգային, ընտանեկան ու հոգեկան պէտքերուն գոհացումը: Այս թիւերը տակաւին կըսեն թէ շատ գործ կայ ընելիք, հունձքը շատ է բայց մշակները քիչ եւ թէ աճող անդամութեան հետ կաճի նաեւ մեր պատասխանատուութիւնը հանդէպ մեր սիրելի ժողովուրդին ու պաշտելի Ս. Եկեղեցիին ու մեր Տիրոջ Յիսուսի Բրիստոսի:

Իբրեւ Հոգեւոր Հովիւր Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյս եւ իր բանաւոր հօտին իմ 1954 տարուան գործունէութեան մէկ ամփոփ տեղեկագիրը կուզեմ ներկայացնել Պատկառելի Ժողովիդ, գիտակցելով որ հովուական բոլոր գործերուս մէջ ալ կարելի էր աւելի լաւը ընել եւ չեմ կրցած ընել: Կուզեմ խոստովանիլ որ եթէ գործին մեծութիւնը եւ բազմերեսութիւնը զիս մղած են որ միշտ ճանչնամ ուժերուս եւ կարողութեանս սահմանափակութիւնը, միւս կողմէ սակայն անոնք տուած են ինծի հոգեկան տաճնապներ. գիտնալ որ ինչ գործեր կան ընելիք, ինչ ծարաւ հոգիներ կան տուներու եւ հիւանդանոցներու մէջ, թէ ինչ ընտանեկան ցաւեր կան որոնք հոգեւորականի մը խնամքին պէտք ունին, եւ այս բոլորը գիտնալէն ետք չկարենալ հասնիլ անոնց եւ շատ անգամ միայն մէկ այցելութեամբ գոհանալ, այս բոլորը ցաւեր են եւ խղճի խայթ կուտան անոր որ կուզէ հաւատարիմ մնալ իր ուխտին: Հետեւեալը մէկ պատկերն է մեր գործին 1954-ի ընթացքին.

Ա. Անխափան ամէն կիրակի ունեցած ենք Ս. Պատարագ եւ քարոզ: Մեծ Պահքի օրերուն Զորեքշաբթի գիշերները Խաղաղական եւ Հանգստեան Ժամերգութիւն, իսկ նոյն շրջանի Կիրակի օրերուն Արեւազալի Ժամերգութիւն եւ Ս. Պատարագ փակեալ խորանով: 1954 տարուան ընթացքին մատուցած ենք 55 Ս. Պատարագ, միասին հաշուած ըլլալով 2 Խթման, 1 Վարդանանց, 1 Հայկական Ծնունդի եւ 1 Աւագ Հինգշաբթի Պատարագները: Հետեւեալ հոգեւոր հայրերը իրենց այցելութեանց առթիւ մատուցած են Ս. Պատարագ եւ պայծառացուցած մեր Սրբազան Արարողութիւնները. Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան, Աւագ Շաբթուան ընթացքին, Գեր. Տ. Սիոն Եպս. Մանուկեան, Հոգ. Տ. Սուքիաս Վրդ. Գալնայեան, Արժ. Տ. Ներսէս Բհնյ. Օտեան, Գեր. Տ. Տիրան Արք. Ներսոյեան, Գեր. Տ. Դերենիկ Եպս. Փոլատեան եւ Թեմիս Առաջնորդ Գեր. Տ. Մամբրէ Արք. Գալնաեան: Այս առթիւ իմ խոր գնահատութիւնս կը յայտնեմ Բարեջ. Աւագ Սարկաւագ Լեւոն Զէնեանի, որ իբրեւ քարոզիչ իր օժանդակութիւնը բերաւ մեզի երկու շաբթը անգամ մը քարոզելով եւ իր խօսքին ուժն ու հմայքը տալով մեր սրբազան Բեմին: Զանացինք այս տարի եւս ամսուան երկրորդ Կիրակին յատկացնել մեր նոր սերունդին, քարոզները խօսելով անգլերէն լեզուով: Երկրորդ անգամ ըլլալով փորձեցինք Բրիստոս Իվի, Դեկտ. 24, գիշերային արարողութիւն մը որ շատ օգտակար եւ յաջող անցաւ այս տարի եւս:

Բ. 1954 տարուան Յունվար 1-ին սկսեալ մինչեւ Դեկտեմբեր 31 ունեցած ենք հետեւեալ խորհրդակատարութիւնները. 104 մկրտութիւն, որոնցմէ 13 հատը տարիքով 20ը անցած էին. ասոնցմէ միայն քանի մը հատը օտար են եւ ամուսնութեան առթիւ որոշած մեր Եկեղեցւոյն միանալ, իսկ մեծ մասը հայեր են որ դժբախտաբար զանազան պատճառներով առիթ չեն ունեցած մկրտուելու: Մնողքներ շատ մեծ սխալ կը գործեն երբ կը զլանան իրենց մանուկներուն այդ աստուածային շնորհը: Պսակադրութիւններուն թիւը եղած է 35 իսկ թաղումներուն թիւը 53, առանց յիշելու այն 2 թաղումները որոնք տեղի ունեցան Գլխավէնտի մէջ:

Ամէն մկրտութենէ առաջ 5-8 վայրկեան տեւող լուսաբանութիւն մը տուած եմ կատարուելիք խորհուրդին մասին, նմանապէս շարունակած եմ խորհրդակցական տեսակցութիւն մը ունենալ ամուսնանալիք զոյգին հետ, թուականէն շուրջ 10 օր առաջ, պահանջելով որ իրենց Մկրտութեան Կայանները միասին բերեն, եւ յաճախ այս առիթներով է որ երեւան կ'ելլէ որ անոնք տակաւին կ'ընտրուած չեն: Աւելի քան ժամ մը տեւող այս խորհրդակցութեանց ընթացքին շնացած եմ զիրենք լուսաբանել Պսակի Ս. խորհուրդին մասին եւ շեշտած կարեւորութիւնը Եկեղեցիին իրենց ընտանեկան երջանկութեան տեսակէտէն: Շարունակած եմ նաեւ թաղումներու առթիւ իմ այցելութիւններս հանգուցեալներու անմիջական պարագաներուն, նոյն ատեն թելադրելով որ փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները յատկացնեն ի նպաստ Եկեղեցւոյս:

Գ. Հրեաներու Եւ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԻՈՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ.- Անցեալ տարուան ընթացքին այցելած եմ միայն 228 հիւանդներ, սակայն երբ նկատի ունենանք թէ հիւանդանոցները որքան հեռու կը գտնուին իրարմէ եւ թէ յաճախ նոյն հիւանդանոցը երկու անգամ երթալու պէտք եղած է քանի որ մեր առաջին այցելութեան լուր չենք ունեցած երկրորդ հիւանդին մասին; այն ատեն այս թիւը ամբողջ տարուան մը համար այնքան պզտիկ պիտի չերելի, իսկ մասնաւոր հովուական այցելութիւններու թիւը եղած է 164: Այս տարի եւս Մնունդի եւ Զատիկի առիթներով այցելած եմ էլօիզի եւ Միշիկընի Տարեցներու Տան մեր հիւանդներուն եւ ծերերուն մասնաւոր պաշտամունք եւ Ս. Հաղորդութիւն մատակարարելով անոնց: Էլօիզի մէջ ունինք շուրջ 30 հայեր: Յիշեալ այցերը կը կազմակերպուին Երէց Տիկնանց Եկեղեցասէր Միութեան կողմէ:

Դ. Տնօրէնէք.- 1954 տարուան ընթացքին Ս. Մնունդի առթիւ օրհնած եմ 90 տուն, իսկ Զատիկի առթիւ 83 տուն, ընդհանուր թիւը բերելով 173ի: Այս մասին շատ դիտողութիւններ լսած եմ որ կանոնաւոր կերպով ոմանց չեմ այցելած եւ կամ մինչեւ հիմա մէկ կամ երկու անգամ միայն այցելած եմ: Ճիշտ է որ յիշած թիւերս Տիթրոյթի մեր համայնքը ծածկելու համար շատ փոքր են, եւ սակայն պէտք է դարձեալ խոստովանիլ թէ ամէն անգամ որ գործի ընտրութեան հարց ծագած է տնօրէնէքի կամ հիւանդի մը այցելութեան եւ կամ ուրիշ կարեւոր ժողովի մը միջեւ միշտ ալ տնօրհնէքը երկրորդական դիրքի վրայ դրած եմ եւ շատ չանցած տնօրհնէքի յատկացեալ օրերն ալ վերջացած են:

Ե. ԶԱՀԱԿԻՐ.- Ամէն ամիս անխափան հրատարակած ենք Եկեղեցւոյս թերթիկը: Մեղք որ տակաւին չենք կրցած զայն վերածել երկշաբաթաթերթի մը: Թէեւ հաճելի բայց շատ ժամանակ սպառող գործ մըն է: Այս առթիւ կուզեմ մասնաւոր շնորհակալութիւն յայտնել Պ. Ճորճ Բիւրէճեանին որ ազնուօրէն յանձն առած է թերթիս սպազորութեան փլէթները ձրի շինել: Թերթին հայերէն բաժնի խմբագրութեան եւ մեքենագրութեան գործը ես է որ կը կատարեմ, իսկ անգլերէն բաժնի խմբագրութիւնն ու մեքենագրութիւնը, ինչպէս նաեւ հասցէներու փոփոխութեան կարեւոր գործը Երէցկիւն Մանուշակ Գասպարեանն է որ կը կատարէ սիրայօժար կերպով: Ներկայիս մեր հասցէներուն թիւն է 1240: Անցեալ տարուան ընթացքին փոխուած կամ նոր գրուած հասցէներուն թիւն է 375:

Զ. ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ.- Այս տարի Թեմական Պատգամաւորական Ժողովին մէջ, ի Եունիք Սիթի նիւ ձրրզի, մեր Եկեղեցին ներկայացուած էր պատգամաւորներու իր ամբողջ կազմով եւ ուրախ ու հպարտ եմ ըսելու որ անոնք խղճմտօրէն կատարեցին իրենց պարտականութիւնը մեր քաղաքին համերաշխութեան ոգիէն տանելով իրենց հետ, որուն այնքան պէտք ունէր այդ ժողովը:

է. Այս առթիւ կուզեմ հակիրճ ակնարկ մը նետել Եկեղեցւոյս շուրջ գործող մարմիններուն եւ կազմակերպութեանց շուրջ:

1.- Կուզեմ շնորհակտութեան կամ Երանան Խորհուրդին ամբողջ կազմը այն եռանդին եւ պարտաճանաչութեան համար զոր ի յայտ բերին անց-նող տարուան շրջանին: Անոնց համերաշխ գործակցութիւնը եւ իրենց գործին կարեւորութեան եւ մեծութեան գիտակցութիւնը առ հասարակ բարի տրամադրութիւն մը ստեղծեց ժողովուրդին մէջ իրենց նկատմամբ: Անոնք գրեթէ ամբողջ կազմով կանոնաւորաբար ամէն կիրակի եկեղեցի եկան, իսկ ժողովներու ընթացքին բացառաբար միայն բացակայութիւններ պատահեցան: Հոգաբարձութիւնը մասնաւոր ուշադրութեան առարկայ ըրաւ Եկեղեցւոյս կազմակերպութեանց համագործակցութիւնը եւ մասնաւոր ներկայացուցիչներ յատկացուց անոնցմէ իւրաքանչիւրին սերտացնելու համար իր կապը անոնց հետ: Առանց վարանելու կրնամ ըսել թէ Հոգաբարձութիւնը արժեցուց լաւագոյն կերպով այն վստահութիւնը որով դուք պաշտօնի կանչեցիք զիրենք:

2.- ՍԱՐԿԱԽԱԳՆԵՐԸ ԵՒ ԴՊՐԱՅ ԴԱՍԸ ղարապետութեամբ Բարեշնորհ Ա.Սրկ. Յարութիւն էքիզեանի ամէն կիրակի իրենց սպասարկութեամբ եւ երգեցողութեամբ պայծառ պահեցին Ս. Եկեղեցին: Մասնաւորաբար փորձերու կապուած դժուարութիւններ ունեցան, բայց վստահ ենք որ իրենց համբաւին վայել քաջութեամբ եւ պարտաճանաչութեամբ կ'ընեն հարթեան ամէն խոչընդոտ: Անոնք հիւրընկալեցին Դպրաց Դասերու Ութերորդ Համաժողովը Տիթրոյթի մէջ եւ մեր Եկեղեցւոյն համար լաւ անուն եւ բարեկամեցողութիւն շահեցան երգելով Միշիկըն Սէնթրըլի մէջ Քրիստոսի առիթով: Ուժ ու կորով կը մաղթենք մեր սիրելի ղարապետին ու լաւագոյն յաջողութիւններ մեր Դպրաց Դասին; որոնց թիւն է 36 մէջը հաշուելով նաեւ 6 սարկաւազները:

3.- ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ԵՐԷՑ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ բոլորեց նիւթապէս եւ բարոյապէս արդիւնաւոր տարի մը: Անդամներուն թիւն է 222, որ բաղադրուած անցեալ տարուան հետ կը ցուցնէ 42 անդամներու յաւելում մը: Անոնք միշտ ցոյց տուած են օրինակելի ծառայասիրութիւն մը եւ միշտ առաջին գծի վրայ եղած են իրենց օժանդակութեամբ: Նախագահած եմ անոնց վարչական ու անդամական ժողովներուն, խօսելով կրօնական եւ եկեղեցական նիւթերու շուրջ եւ ուղղութիւն տուած իրենց նպատակներու իրագործման ընթացքին:

4.- ԿՐՏՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ եւս բոլորեց արդիւնաւոր տարի մը եւ բերաւ իր օժանդակութիւնը մասնաւորաբար Կիրակնօրեայ Դպրոցին իր անդամներուն մէջէն յառաջ բերելով նուիրուած ու կարող ուսուցչուհիներու խումբ մը: Տիկնանց այս միութեան անդամներուն թիւն է 35: Որոշապէս կարելի է հաստատել թէ անոնք տարուէ տարի աւելի ընտանի կը զգան ինքզինքնին Եկեղեցւոյս եւ անոր պաշտամունքներուն:

5.- ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ իր Երէց եւ Կրտսերաց խումբերով կը շարունակէ իր գործունէութիւնը Եկեղեցւոյս հովանիին ներքեւ: Մեծերու անդամութիւնն է 190, իսկ Կրտսերներունն է 30: Ձեր փորձառութեամբ գիտէք թէ երբ որեւէ կազմակերպութիւն թիւով կաճի, անոր պէտքերուն հասնիլը նոյն համեմատութեամբ կաւելնայ եւ կարելի չըլլար անձնական կապ մը հաստատել բոլորին հետ եւ դաստիարակչական մեր ճիգերը պէտք եղածին չափ ազդու չեն ըլլար: Ունինք շատ գործունէայ Դաստիարակչական Յանձնախումբ մը, որ կազմակերպած է դասախօսութիւններ եւ ասուլիսներ մեր եկեղեցին աւելի հիմնովին ճանչցնելու ճիգով: Անոնք եւս գործօն օժանդակութիւն կը բերեն Կիրակնօրեայ Դպրոցի գործին հայթայթելով թէ ուսուցիչներ եւ թէ հովանաւորելով Կիրակնօրեայ վարժարանի համար ուսուցիչներ դաստիարակելու յայտագիր մը: Նոյն այս կազմակերպութեան պատիկ խմբակ մը Սէնթ Կրիստօֆ Եւ ՆԱՐԵԿ ՖէլՇՄԻՓ անուան տակ այս չորրորդ տարին ըլլալով կը շարունակէ ամէն Ուրբաթ գիշեր անխափան գալ մեր բնակարանը կրօնական ուսումներ ընելու ծրագրով:

6.- ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑը իր բազմավաստակ Տնօրէնին, Բրշ. Ա. Սրկ. Լեւոն Զէնեանի առաջնորդութեամբ կաճի եւ կը բազմանայ թէ որակով եւ թէ քանակով: Փառք Տիրոջ մեր ունեցած այս անգնահատելի օրհնութեանց համար: Ունինք 330 աշակերտներ, բաժնուած 28 դասարաններու, յանձնուած 37 ուսուցիչ-

ներու անձնուէր խնամքին: Տեղի ներուժիւնը պատճառ եղաւ որ մանուկները ընդունինք երբ չորս տարեկան եղած են, սակայն դարձեալ մեր տեղը ներքէ, աւելի աշակերտ չենք կրնար ընդունիլ եւ մեր ներկայ դրութիւնը հեռու է գոհացուցիչ ըլլալէ: Մեր այս մանուկներուն սիրոյն մեր նոր եկեղեցի եւ դպրոց շինելու ծրագիրը պէտք է շուտով իրագործենք:

7.- ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ԴՊՐՈՑը բաղադրաբար աւելի գործնական եւ հաստատուն կերպարանք մը առաւ երբ դասաւանդութիւնը փոխադրուեցաւ կիրակի առաւօտեան Կիրակնօրեայ Դպրոցէն առաջ: Պր.Արշալիր Եղիսէեան, Դպրոցին Վերատեսուչը խղճմտօրէն կը վարէ դասընթացքները իր երեք ուսուցիչներուն օժանդակութեամբ: Աշակերտութեան թիւն է 50:

8.- Ս.ԽՈՐԱՆԻ ՀՈԳԱՏԱՐ ՄԱՐՄԻՆը եւս կանոնաւորապէս շարունակեց իր գործը Չանազիր ըլլալով որ Ս.Խորանը ըլլալ միշտ մաքուր եւ ունենայ ճաշակաւոր նոր առարկաներ անոր պէտքին ու զարդարանքին համար: Քանիցս արդէն ծանուցած ենք որ անոնք որ Եկեղեցւոյս նուէր մը կը փափաքին ընել փոխանակ երթալու եւ գնում ընելէն ետք զայն նուիրելու շատ աւելի լաւ պիտի ըլլար նախ եթէ խորհրդակցին իմ հետ եւ կամ յիշեալ Մարմնի անդամներէն մէկուն հետ: Յարմար կը դատենք այստեղ յիշել այն նուէրները զորս ստացած ենք Եկեղեցւոյս անունով եւ Հոգաբարձութիւնը նուիրատուներուն, մասնաւոր նամակով, իր գնահատանքը յայտնած է: Երկու հատ Սեղանի ծածկոց, երկու հատ սկիհի ծածկոց, զոյգ մը թագեր, մին արծաթ եւ միւսը ոսկի, Ս.Պատկի թագադրութեան համար, Երուսաղէմէն բերուած արծաթէ զոյգ մը բուրվառ եւ խնկաման մը, մասնաւոր շինուած հանդերձադարան մը պատարագիչի զգեստներուն եւ Ս.Խորանին սպասներուն համար, մէկ ձեռագործ մը, մէկ Մաշտոց մը զոյգ մը հողաթափ եւ դարձեալ Երուսաղէմէն բերուած արծաթ կողքով ձաշու Աւետարան մը եւ Ատենի Աւետարան մը: Միշտ աղօթող ենք որ Աստուած նուիրատուներուն ուխտերը ընդունելի ընէ եւ իրենց ալ արեւշատութիւն պարգեւէ:

9.- ԵԿԵՂԵՑԱՆ ԻՆԱՑ ՅԱՆՁՆԱՍՈՒՄԲը գործօն կերպով շարունակեց իր հանգանակութիւնը, կազմեց Երիտասարդաց Յանձնախումբ մը բաղկացեալ Երիտասարդ զոյգերէ, որոնք իրենց տարիքին վայել եռանդով գործին նուիրուեցան: Յանձնախումբը շինութեան գործը մօտեցուց անմիջական ապագային գնելով հող մը որ թէ իր դիրքով, ~~եւ~~ թէ իր տարածութեամբ եւ թէ արժէքով գոհացուցիչ է մեր պէտքերուն: Ենդհանուրութեան եւ գնահատանքի խօսքեր միայն ունինք Եկեղեցաշինաց Յանձնախումբին բոլոր անդամներուն որոնք անձնազիր ոգիով յառաջ կը տանին այս սրբազան գործը:

Սիրելի ծխակահներ, ահա շատ ամփոփ գիծերու մէջ այն գործերը որոնց հետ կապ ունեցած եմ իբրեւ հովիւ եկեղեցւոյս: Թոյլատրելի չէ ինծի խօսիլ տակաւին կարգ մը գործերու մասին զորս կատարած եմ իբրեւ խոստովանահայր, օգնելով ընտանեկան դժուարութիւններ ունեցող անձերու: Վեր ի վերոյ հաշիւ մը ընելով գտած եմ որ 1954 տարուան ընթացքին մասնակցած եմ 185 ժողովներու:

Կը փափաքիմ այս Պատկառելի Ժողովին մասնաւոր նկատառման ենթարկել շատ կարեւոր պահանջ մը: Արդէն իսկ ընդարձակ այս Եկեղեցիին գործերը կաճին ու կը բազմանան Աստուծոյ ողորմութեամբ եւ սակայն մեր միջոցները կը մնան տակաւին նախնական: Յաճախ ստիպուած եմ ընելու գործեր որոնք ինծի պէտք չէ որ մնային որպէսզի ես իմ ժամանակս աւելի կարեւոր հովուական պարտականութիւններուս յատկացնէի: Մեր եկեղեցին պէտք ունի մեքենագրող քարտուղարի մը որպէսզի

հոգ տանի շատ մը թղթակցութեանց եւ մեր շատ մը գործերը աւելի արդիւնաւոր ըլլան :  
Զմոռնանք որ ներկայիս աւելցած է նաեւ եկեղեցաշինութեան գործը, որ ինքնին  
արդէն մեծ աշխատանք մըն է : Երբ Եկեղեցւոյ տարեկան պիւտճէն 30,000 տոլար է  
եւ կը պատրաստուինք կէս միլիոնոց Եկեղեցի ու պարոց շինել, մեծ սխալ մը պիտի  
ըլլայ ներկայ դրութեամբ շարունակել գործերը : ~~Կարծեմ~~ Գարտուղարի մը պէտքէն  
առաջ նախ պէտք ունինք գրասենեակի մը, որ յարմարութիւն ներկայացնէ թէ մեր  
սեղաններուն եւ թէ մեր բազմագրող մեքենաներուն համար : Այս ուղղութեամբ ծախ-  
սուած ունէ գումար ոչ միայն ինքզինք պիտի արդարացնէ, այլ նաեւ պիտի աւելցնէ  
~~Կարծեմ~~ մեր եկամուտը : Դ՛մ խնդրանքս է որ որդեգրէիք այս առաջարկը եւ լիազօրէիք  
Ծխական Խորհուրդը որ այս ուղղութեամբ գործադրէր Ձեր կամքը :

Վերջացնելէ առաջ այս տարեկան զեկոյցը կամ տեղեկագիրը պարտք կը  
զգամ եւ հաճոյքով կը գնահատեմ եւ կ'օրհնեմ մեր եկեղեցւոյ բոլոր կազմակերպու-  
թիւնները եւ բոլոր այն անդամները, որոնք իրենց բաժինը բերին եկեղեցւոյ տա-  
րեկան այս հունձքին մէջ, ինչպէս նաեւ բոլոր անոնք որոնց բարեկամութիւնը վա-  
յելեցի, որոնք օգնեցին ինծի երբեմն իրենց բարի թելադրութիւններով եւ երբեմն  
իրենց յօժարակամ գործակցութեամբ ամէն անգամ որ պէտք ունեցայ իրենց : Կը  
մաղթեմ Աստուծոյ օրհնութիւնը եւ վարձատրութիւնը բոլորին, իրենց նուիրեալ  
ծառայութեան համար :

Աղօթեցէք որ Աստուած ինծի եւս, իր ամենէն խոնարհ սպասաւորին ու  
պաշտօնեային, տայ իր շնորհը որպէսզի իմաստութեամբ, նուիրումով եւ քաջութեամբ  
կարենամ բոլորել յառաջիկայ տարին Քրիստոսի եւ Հայց. Եկեղեցւոյ փառքին համար  
աշխատելով :

Մարտ 18, 1955

ԱՌՆԱԿ ԵՐԷՑ  
Հոգեւոր Հովիւ

Յատկանշական գուճադիպուծեամբ մը այսօր Տնտեսին Կիրակին է եւ մենք բոլորս իբրեւ տնտեսները Աստուծոյ Գործին եկած ենք մեր տարեկան համարը ներկայացնելու: Ուրախ եմ յայտարարելու որ ունեցած եկեղեցական ու ազգային բարւոք գործունէութեամբ բեղուն տարի մը: Տիթրոյթի մեր հայ համայնքը պատուաբեր դիրք մը կը գրաւէ Արեւմտեան կիսագունդի գաղթաշխարհին մէջ ոչ միայն իր թիւին պատճառաւ, այլ մանաւանդ իր երեւան բերած տեսիլքի տէր եւ գոհաբերող առաջնորդներով, որոնց իմաստութեան շնորհիւ ունինք համայնք մը որ ամէնէն աւելի կը տիրէ յարգանքն ու իրերահասկացողութիւնը ներկայ դժբախտ պայմաններուն ներած չափովը: Մեծագոյն Տիթրոյթի հայութեան թիւը կարելի է եղած ստուգել, ընդհանուր կարծիքը այն է թէ մեր թիւը կը հասնի 15,000ի եւ թէ մեր Ծուխի շրջանակին մէջ գտնուող հայերու թիւն է մօտաւորապէս 8,000: Ունինք 1240 հասցէ, որոնց կը ղրկուին մեր ծանուցումներն ու թերթիկը, անցեալ տարուան վրայ աւելցուցած ըլլալով 78 նոր հասցէներ: Այս անցնող տարուան ընթացքին մեր տրատու անդամներուն թիւն է 1045, մեր տոմարները կը ցուցնեն թէ անցեալ տարի ունէինք միայն 780 անդամ: Եթէ այս թիւերը կը խօսին, անոնք մէկ բան կըսեն. Մեր ժողովուրդը, եւ մասնաւորաբար մեր երիտասարդութիւնը կը դիմեն Հայց.Եկեղեցի ու անկէ կը սպասեն իրենց ազգային, ընտանեկան ու հոգեկան պէտքերուն գոհացումը: Այս թիւերը տակաւին կըսեն թէ շատ գործ կայ ընելիք, հունձքը շատ է բայց մշակները քիչ եւ թէ անող անդամութեան հետ կաճի նաեւ մեր պատասխանատուութիւնը հանդէպ մեր սիրելի ժողովուրդին ու պաշտելի Ս.Եկեղեցիին ու մեր Տիրոջ Յիսուսի Բրիստոսի:

Իբրեւ Հոգեւոր Հովիւր Ս.Յովհ.Մկրտիչ Եկեղեցւոյս եւ իր բանաւոր հօտին իմ 1954 տարուան գործունէութեան մէկ ամփոփ տեղեկագիրը կուզեմ ներկայացնել Պատկառելի Ժողովիդ, գիտակցելով որ հովուական բոլոր գործերուս մէջ ալ կարելի էր աւելի լաւը ընել եւ չեմ կրցած ընել: Կուզեմ խոստովանիլ որ եթէ գործին մեծութիւնը եւ բազմերեսութիւնը գիտմով եմ որ միշտ ճանչնամ ուժերուս եւ կարողութեանս սահմանափակութիւնը, միւս կողմէ սակայն անոնք տուած են ինձի հոգեկան տաճնապներ. գիտնալ որ ինչ գործեր կան ընելիք, ինչ ծարաւ հոգիներ կան տուներու եւ հիւանդանոցներու մէջ, թէ ինչ ընտանեկան ցաւեր կան որոնք հոգեւորականի մը խնամքին պէտք ունին, եւ այս բոլորը գիտնալէն ետք չկարենալ հասնիլ անոնց եւ շատ անգամ միայն մէկ այցելութեամբ գոհանալ, այս բոլորը ցաւեր են եւ խղճի խայթ կուտան անոր որ կուզէ հաւատարիմ մնալ իր ուխտին: Հետեւեալը մէկ պատկերն է մեր գործին 1954ի ընթացքին.

Ա. Անխափան ամէն կիրակի ունեցած ենք Ս.Պատարագ եւ քարոզ: Մեծ Պահքի օրերուն Ձորեքշաբթի գիշերները Խաղաղական եւ Հանգստեան Ժամերգութիւն, իսկ նոյն շրջանի Կիրակի օրերուն Արեւազալի Ժամերգութիւն եւ Ս.Պատարագ փակեալ խորանով: 1954 տարուան ընթացքին մատուցած ենք 55 Ս.Պատարագ, միասին հաշուած ըլլալով 2 Խթման, 1 Վարդանանց, 1 Հայկական Ծնունդի եւ 1 Աւագ Հինգշաբթիի Պատարագները: Հետեւեալ հոգեւոր հայրերը իրենց այցելութեանց առթիւ մատուցած են Ս.Պատարագ եւ պայծառացուցած մեր Սրբազան Արարողութիւնները. Հոգ.Տ.Թորգոմ Վրդ.Մանուկեան, Աւագ Շաբթուան ընթացքին, Գեր.Տ.Սիրոն Եպս.Մանուկեան, Հոգ.Տ.Սուքիաս Վրդ.Գալմայեան, Արժ.Տ.Ներսէս Բհնյ.Օտեան, Գեր.Տ.Տիրան Արք.Ներսոյեան, Գեր.Տ.Դերենիկ Եպս.Փոլատեան եւ Թեմիս Առաջնորդ Գեր.Տ.Մամբրէ Արք.Գալմայեան: Այս առթիւ իմ խոր գնահատութիւնս կը յայտնեմ Բարեշ. Աւագ Սարկաւազ Լեւոն Ձէնեանի, որ իբրեւ քարոզիչ իր օժանդակութիւնը բերաւ մեզի երկու շաբթիւ անգամ մը քարոզելով եւ իր խօսքին ուժն ու հմայքը տալով մեր սրբազան Բեմին: Ջանացինք այս տարի եւս ամսուան երկրորդ Կիրակին յատկացնել մեր նոր սերունդին, քարոզները խօսելով անգլերէն լեզուով: Երկրորդ անգամ ըլլալով փորձեցինք ԲրիՍՄԸՍ ԻՎի, Դեկտ. 24, գիշերային արարողութիւն մը որ շատ օգտակար եւ յաջող անցաւ այս տարի եւս:

Բ. 1954 տարուան Յունվար 1-ին սկսեալ մինչեւ Դեկտեմբեր 31 ունեցած ենք հետեւեալ խորհրդակատարութիւնները. 104 մկրտութիւն, որոնցմէ 13 հատը տարիքով 20ը անցած էին. ասոնցմէ միայն քանի մը հատը օտար են եւ ամուսնութեան առթիւ որոշած մեր Եկեղեցւոյն միանալ, իսկ մեծ մասը հայեր են որ դժբախտաբար զանազան պատճառներով առիթ չեն ունեցած մկրտուելու: Ծնողքներ շատ մեծ սխալ կը գործեն երբ կը զլանան իրենց մանուկներուն այդ աստուածային շնորհը: Պսակադրութիւններուն թիւը եղած է 85 իսկ թաղումներուն թիւը 58, առանց յիշելու այն 2 թաղումները որոնք տեղի ունեցան Գլիվլէնտի մէջ:

Ամէն մկրտութենէ առաջ 5-8 վայրկեան տեւող լուսաբանութիւն մը տուած եմ կատարուելիք Խորհուրդին մասին, նմանապէս շարունակած եմ խորհրդակցական տեսակցութիւն մը ունենալ ամուսնանալիք զոյգին հետ, թուականէն շուրջ 10 օր առաջ, պահանջելով որ իրենց Մկրտութեան Վկայականները միասին բերեն, եւ յաճախ այս առիթներով է որ երեւան կ'ելլէ որ անոնք տակաւին կ'նքուած չեն: Աւելի քան ժամ մը տեւող այս խորհրդակցութեանց ընթացքին շնացած եմ զիրենք լուսաբանել Պսակի Ս. Խորհուրդին մասին եւ շեշտած կարեւորութիւնը Եկեղեցիին իրենց ընտանեկան երջանկութեան տեսակէտէն: Շարունակած եմ նաեւ թաղումներու առթիւ իմ այցելութիւններս հանգուցեալներու անմիջական պարագաներուն, նոյն ատեն թելադրելով որ փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները յատկացնեն ի նպաստ Եկեղեցւոյս:

Գ. Հիւանդանոցներու եւ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԻՈՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ.- Անցեալ տարուան ընթացքին այցելած եմ միայն 228 հիւանդներ, սակայն երբ նկատի ունենանք թէ հիւանդանոցները որքան հեռու կը գտնուին իրարմէ եւ թէ յաճախ նոյն հիւանդանոցը երկու անգամ երթալու պէտք եղած է քանի որ մեր առաջին այցելութեան լուր չենք ունեցած երկրորդ հիւանդին մասին; այն ատեն այս թիւը ամբողջ տարուան մը համար այնքան պզտիկ պիտի չերելի, իսկ մասնաւոր հովուական այցելութիւններուս թիւը եղած է 164: Այս տարի եւս Ծնունդի եւ Զատիկի առիթներով այցելած եմ էլօիզի եւ Միշիկընի Տարեցներու Տան մեր հիւանդներուն եւ ծերերուն մասնաւոր պաշտամունք եւ Ս. Հաղորդութիւն մատակարարելով անոնց: էլօիզի մէջ ունինք շուրջ 30 հայեր: Յիշեալ այցերը կը կազմակերպուին Երէց Տիկնանց Եկեղեցասէր Միութեան կողմէ:

Դ. Տնօրէնէք.- 1954 տարուան ընթացքին Ս. Ծնունդի առթիւ օրհնած եմ 90 տուն, իսկ Զատիկի առթիւ 83 տուն, ընդհանուր թիւը բերելով 173ի: Այս մասին շատ դիտողութիւններ լսած եմ որ կանոնաւոր կերպով ոմանց չեմ այցելած եւ կամ մինչեւ հիմա մէկ կամ երկու անգամ միայն այցելած եմ: Ճիշտ է որ յիշած թիւերս Տիթրոյթի մեր համայնքը ծածկելու համար շատ փոքր են, եւ սակայն պէտք է դարձեալ խոստովանիլ թէ ամէն անգամ որ գործի ընտրութեան հարց ծագած է տնօրէնէքի կամ հիւանդի մը այցելութեան եւ կամ ուրիշ կարեւոր ժողովի մը միջեւ միշտ ալ տնօրէնէքը երկրորդական դիրքի վրայ դրած եմ եւ շատ չանցած տնօրէնէքի յատկացեալ օրերն ալ վերջացած են:

Ե. ԶԱՀԱԿԻՐ.- Ամէն ամիս անխափան հրատարակած ենք Եկեղեցւոյս թերթիկը: Մեղք որ տակաւին չենք կրցած զայն վերածել երկշաբաթաթերթի մը: Թէեւ հաճելի բայց շատ ժամանակ սպառող գործ մըն է: Այս առթիւ կուզեմ մասնաւոր շնորհակալութիւն յայտնել Պր. Ճորճ Բիւրէճեանին որ ազնուօրէն յանձն առած է թերթիս սպազրութեան փլէթները ձրի շինել: Թերթին հայերէն բաժնի խմբագրութեան եւ մեքենագրութեան գործը ես է որ կը կատարեմ, իսկ անգլերէն բաժնի խմբագրութիւնն ու մեքենագրութիւնը, ինչպէս նաեւ հասցէներու փոփոխութեան կարեւոր գործը Երէցկի Մանուշակ Գասպարեանն է որ կը կատարէ սիրայօժար կերպով: Ներկայիս մեր հասցէներուն թիւն է 1240: Անցեալ տարուան ընթացքին փոխուած կամ նոր գրուած հասցէներուն թիւն է 875:

Զ. ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ.- Այս տարի Թեմական Պատգամաւորական Ժողովին մէջ, ի Եունիքի Սիթի նիւ ձըրզի, մեր Եկեղեցին ներկայացուած էր պատգամաւորներու իր ամբողջ կազմով եւ ուրախ ու հպարտ եմ ըսելու որ անոնք խղճմտօրէն կատարեցին իրենց պարտականութիւնը մեր քաղաքին համերաշխութեան ոգիէն տանելով իրենց հետ, որուն այնքան պէտք ունէր այդ ժողովը:

Է. Այս առթիւ կուզեմ հակիրճ ակնարկ մը նետել Եկեղեցւոյս շուրջ գործող մարմիններուն եւ կազմակերպութեանց շուրջ:

1.- Կուզեմ շնորհակտութեան կամ Ծիական Խորհուրդին ամբողջ կազմը այն եռանդին եւ պարտաճանաչութեան համար զոր ի յայտ բերին անց-նող տարուան շրջանին: Անոնց համերաշխ գործակցութիւնը եւ իրենց գործին կարեւորութեան եւ մեծութեան գիտակցութիւնը առ հասարակ բարի տրամադրութիւն մը ստեղծեց ժողովուրդին մէջ իրենց նկատմամբ: Անոնք գրեթէ ամբողջ կազմով կանոնաւորաբար ամէն կիրակի եկեղեցի եկան, իսկ ժողովներու ընթացքին բացառաբար միայն բացակայութիւններ պատահեցան: Հոգաբարձութիւնը մասնաւոր ուշադրութեան առարկայ ըրաւ Եկեղեցւոյս կազմակերպութեանց համագործակցութիւնը եւ մասնաւոր ներկայացուցիչներ յատկացուց անոնցմէ իւրաքանչիւրին սերտացնելու համար իր կապը անոնց հետ: Առանց վարանելու կրնամ ըսել թէ Հոգաբարձութիւնը արժեցուց լաւագոյն կերպով այն վստահութիւնը որով դուք պաշտօնի կանչեցիք զիրենք:

2.- ՍԱՐԿԱԻԱԳՆԵՐԸ ԵՒ ԴՊՐԱՅ ԴԱՍԸ ղարապետութեամբ Բարեշնորհ Ա.Սրկ. Յարութիւն էքիզեանի ամէն կիրակի իրենց սպասարկութեամբ եւ երգեցողութեամբ պայծառ պահեցին Ս. Եկեղեցին: Մասնաւորաբար փորձերու կապուած դժուարութիւններ ունեցան, բայց վստահ ենք որ իրենց համբաւին վայել քաջութեամբ եւ պարտաճանաչութեամբ պլքը հարթեն ամէն խոչընդոտ: Անոնք հիւրընկալեցին Դպրաց Դասերու Ութերորդ Համաժողովը Տիթրոյթի մէջ եւ մեր Եկեղեցւոյն համար լաւ անուն եւ բարեկամեցողութիւն շահեցան երգելով Միշիկըն Սէնթրըլի մէջ Քրիստոսի առիթով: Ուժ ու կորով կը մաղթենք մեր սիրելի ղարապետին ու լաւագոյն յաջողութիւններ մեր Դպրաց Դասին, որոնց թիւն է 36 մէջը հաշուելով նաեւ 6 սարկաւազները:

3.- ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ԵՐԷՑ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆՆԸ բոլորեց նիւթապէս եւ բարոյապէս արդիւնաւոր տարի մը: Անդամներուն թիւն է 222, որ բաղադրուած անցեալ տարուան հետ կը ցուցնէ 42 անդամներու յաւելում մը: Անոնք միշտ ցոյց տուած են օրինակելի ծառայասիրութիւն մը եւ միշտ առաջին դժի վրայ եղած են իրենց օժանդակութեամբ: Նախագահած եմ անոնց վարչական ու Անդամական ժողովներուն, խօսելով կրօնական եւ եկեղեցական նիւթերու շուրջ եւ ուղղութիւն տուած իրենց նպատակներու իրագործման ընթացքին:

4.- ԿՐՏՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆՆԸ եւս բոլորեց արդիւնաւոր տարի մը եւ բերաւ իր օժանդակութիւնը մասնաւորաբար Կիրակնօրեայ Դպրոցին իր անդամներուն մէջէն յառաջ բերելով նուիրուած ու կարող ուսուցչուհիներու խումբ մը: Տիկնանց այս միութեան անդամներուն թիւն է 35: Որոշապէս կարելի է հաստատել թէ անոնք տարուէ տարի աւելի ընտանի կը զգան ինքզինքնին Եկեղեցւոյս եւ անոր պաշտամունքներուն:

5.- ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԸ իր Երէց եւ Կրտսերաց խումբերով կը շարունակէ իր Երէց գործունէութիւնը Եկեղեցւոյս հովանիին ներքեւ: Մեծերու անդամութիւնն է 190, իսկ Կրտսերներունն է 30: Զեր փորձառութեամբ գիտէք թէ երբ որեւէ կազմակերպութիւն թիւով կաճի, անոր պէտքերուն հասնիլը նոյն համեմատութեամբ կաւելնայ եւ կարելի չըլլար անձնական կապ մը հաստատել բոլորին հետ եւ դաստիարակչական մեր ճիգերը պէտք եղածին չափ ազդու չեն ըլլար: Ունինք շատ գործունէայ Դաստիարակչական Յանձնախումբ մը, որ կազմակերպած է դասախօսութիւններ եւ ասուլիսներ մեր եկեղեցին աւելի հիմնովին ճանչցնելու ճիգով: Անոնք եւս գործօն օժանդակութիւն կը բերեն Կիրակնօրեայ Դպրոցի գործին հայթայթելով թէ ուսուցիչներ եւ թէ հովանաւորելով Կիրակնօրեայ Վարժարանի համար ուսուցիչներ դաստիարակելու յայտագիր մը: Նոյն այս կազմակերպութենէն պզտիկ խմբակ մը Սէնթ Կրիստօֆ Ավ ՆԱՐԵԿ ՖէլՇՄԻՓ անուան տակ այս չորրորդ տարին ըլլալով կը շարունակէ ամէն Ուրբաթ գիշեր անխափան գալ մեր բնակարանը կրօնական ուսումներ ընելու ծրագրով:

6.- ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑը իր բազմավաստակ Տնօրէնին, Բրշ. Ա. Սրկ. Լեւոն Զէնեանի առաջնորդութեամբ կաճի եւ կը բազմանայ թէ որակով եւ թէ քանակով: Փառք Տիրոջ մեր ունեցած այս անգնահատելի օրհնութեանց համար: Ունինք 330 աշակերտներ, բաժնուած 23 դասարաններու, յանձնուած 37 ուսուցիչ-



ներու անձնուէր խնամքին: Տեղի ներուժիւնը պատճառ եղաւ որ մանուկները ընդունինք երբ չորս տարեկան եղած են, սակայն դարձեալ մեր տեղը նեղ է, աւելի աշակերտ չենք կրնար ընդունիլ եւ մեր ներկայ դրութիւնը հեռու է գոհացուցիչ ըլլալէ: Մեր այս մանուկներուն սիրոյն մեր նոր եկեղեցի եւ դպրոց շինելու ծրագիրը պէտք է շուտով իրագործենք:

7.- ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ԴՊՐՈՑը բաղադատաբար աւելի գործնական եւ հաստատուն կերպարանք մը առաւ երբ դասաւանդութիւնը փոխադրուեցաւ կիրակի առաւօտեան Կիրակնօրեայ Դպրոցէն առաջ: Պր.Արշաւիր Եղիսէեան, Դպրոցին Վերատեսուչը խղճմտօրէն կը վարէ դասընթացքները իր երեք ուսուցիչներուն օժանդակութեամբ: Աշակերտութեան թիւն է 50:

8.- Ս.ԽՈՐԱՆԻ ՀՈԳԱՏԱՐ ՄԱՐՄԻՆը եւս կանոնաւորապէս շարունակեց իր գործը Չանդիր ըլլալով որ Ս.Խորանը ըլլայ միշտ մաքուր եւ ունենայ ճաշակաւոր նոր առարկաներ անոր պէտքին ու զարդարանքին համար: Քանիցս արդէն ծանուցած ենք որ անոնք որ Եկեղեցւոյս նուէր մը կը փափաքին ընել փոխանակ երթալու եւ գնում ընելէն ետք զայն նուիրելու շատ աւելի լաւ պիտի ըլլար նախ եթէ խորհրդակցին իմ հետ եւ կամ յիշեալ Մարմնի անդամներէն մէկուն հետ: Յարմար կը դատենք այստեղ յիշել այն նուէրները զորս ստացած ենք Եկեղեցւոյս անունով եւ Հոգաբարձութիւնը նուիրատուներուն, մասնաւոր նամակով, իր գնահատանքը յայտնած է: Երկու հատ Սեղանի ծածկոց, երկու հատ սկիհի ծածկոց, զոյգ մը թագեր, մին արծաթ եւ միւսը ոսկի, Ս.Պատկի թագադրութեան համար, Երուսաղէմէն բերուած արծաթէ զոյգ մը բուրվառ եւ խնկաման մը, մասնաւոր շինուած հանդերձարան մը պատարագիչի զգեստներուն եւ Ս.Խորանին սպասներուն համար, մէկ ձեռագործ մը, մէկ Մաշտոց մը զոյգ մը հողաթափ եւ դարձեալ Երուսաղէմէն բերուած արծաթ կողքով ձաշու Աւետարան մը եւ Ատենի Աւետարան մը: Միշտ աղօթող ենք որ Աստուած նուիրատուներուն ուխտերը ընդունելի ընէ եւ իրենց ալ արեւշատութիւն պարգեւէ:

9.- ԵԿԵՂԵՑԱՇԻՆԱՅ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲը գործօն կերպով շարունակեց իր հանգանակութիւնը, կազմեց Երիտասարդաց Յանձնախումբ մը բաղկացեալ Երիտասարդ զոյգերէ, որոնք իրենց տարիքին վայել եռանդով գործին նուիրուեցան: Յանձնախումբը շինութեան գործը մօտեցուց անմիջական ապագային գնելով հող մը որ թէ իր դիրքով, եւ թէ իր տարածութեամբ եւ թէ արժէքով գոհացուցիչ է մեր պէտքերուն: Շնորհաւորութեան եւ գնահատանքի խօսքեր միայն ունինք Եկեղեցաշինաց Յանձնախումբին բոլոր անդամներուն որոնք անձնդիր ոգիով յառաջ կը տանին այս սրբազան գործը:

Սիրելի ծխականներ, ահա շատ ամփոփ գիծերու մէջ այն գործերը որոնց հետ կապ ունեցած եմ իբրեւ հովիւ եկեղեցւոյս: Թոյլատրելի չէ ինծի խօսիլ տակաւին կարգ մը գործերու մասին զորս կատարած եմ իբրեւ խոստովանահայր, օգնելով ընտանեկան դժուարութիւններ ունեցող անձերու: Վերի վերոյ հաշիւ մը ընելով գտած եմ որ 1954 տարուան ընթացքին մասնակցած եմ 185 ժողովներու:

Կը փափաքիմ այս Պատկառելի Ժողովին մասնաւոր նկատաւման ենթարկել շատ կարեւոր պահանջք մը: Արդէն իսկ ընդարձակ այս Եկեղեցիին գործերը կաճին ու կը բազմանան Աստուծոյ ողորմութեամբ եւ սակայն մեր միջոցները կը մնան տակաւին նախնական: Յաճախ ստիպուած եմ ընելու գործեր որոնք ինծի պէտք չէ որ մնային որպէսզի ես իմ ժամանակս աւելի կարեւոր հովուական պարտականութիւններուս յատկացնէի: Մեր եկեղեցին պէտք ունի մեքենագրող քարտուղարի մը որպէսզի

հոգ տանի շատ մը թղթակցութեանց եւ մեր շատ մը գործերը աւելի արդիւնաւոր ըլլան: Չմոռնանք որ ներկայիս աւելցած է նաեւ եկեղեցաշինութեան գործը, որ ինքնին արդէն մեծ աշխատանք մըն է: Երբ Եկեղեցւոյ տարեկան պիւտճէն 30,000 տուար է եւ կը պատրաստուինք կէս միլիոնոց Եկեղեցի ու Կարոց շինել, մեծ սխալ մը պիտի ըլլայ ներկայ դրութեամբ շարունակել գործերը: ~~Կարծեմ~~ Քարտուղարի մը պէտքէն առաջ նախ պէտք ունինք զրասենեակի մը, որ յարմարութիւն ներկայացնէ թէ մեր սեղաններուն եւ թէ մեր բազմագրող մեքենաներուն համար: Այս ուղղութեամբ ծախսուած ունի գումար ոչ միայն ինքզինք պիտի արդարացնէ, այլ նաեւ պիտի աւելցնէ ~~Կարծեմ~~ մեր եկամուտը: Իմ խնդրանքս է որ որդեգրէիք այս առաջարկը եւ լիազօրէիք Ծխական Խորհուրդը որ այս ուղղութեամբ գործադրէր Ձեր կամքը:

Վերջացնելէ առաջ այս տարեկան զեկոյցը կամ տեղեկագիրը պարտք կը զգամ եւ հաճոյքով կը գնահատեմ եւ կ'օրհնեմ մեր եկեղեցւոյ բոլոր կազմակերպութիւնները եւ բոլոր այն անդամները, որոնք իրենց բաժինը բերին եկեղեցւոյ տարեկան այս հունձքին մէջ, ինչպէս նաեւ բոլոր անոնք որոնց բարեկամութիւնը վայելեցի, որոնք օգնեցին ինծի երբեմն իրենց բարի թելադրութիւններով եւ երբեմն իրենց յօժարակամ գործակցութեամբ ամէն անգամ որ պէտք ունեցայ իրենց: Կը մաղթեմ Աստուծոյ օրհնութիւնը եւ վարձատրութիւնը բոլորին, իրենց նուիրեալ ծառայութեան համար:

Աղօթեցէք որ Աստուած ինծի եւս, իր ամենէն խոնարհ սպասաւորին ու պաշտօնեային, տայ իր շնորհը որպէսզի իմաստութեամբ, նուիրումով եւ քաջութեամբ կարենամ բոլորել յառաջիկայ տարին Քրիստոսի եւ Հայց.Եկեղեցւոյ փառքին համար աշխատելով:

Մարտ 18, 1955

ԱՌՆԱԿ ԵՐԷՑ  
Հոգեւոր Հովիւ